ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 8 – Ա 16 հունվարի 2019 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 67-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գավառի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի հունվարի 11-ին անցկացված մրցույթի մասնակից Կարեն Ֆրունզիկի Մինասյանի՝ իր արդյունքների մասով, բողոքի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սողոմոնյան Սամվել - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ

Ղուկասյան Գոհար - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Մուշեղյան Յուրա - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Սարգսյան Նելսոն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

2. Հանձնաժողովին՝ բողոքի վերաբերյալ եզրակացությունը 5-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ